

**ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ  
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԴԻ ՓՈԼՈՒՄ.  
ՆՈՐ ՄԻՏՈՒՄՆԵՐ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ  
ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԴՐՈՒՅԹՈՒՄ**

*Արամ Միմոնյան  
Վահագն Ազյան*

Իր զարգացման նորագույն ժամանակահատվածում Ռուսաստանի Դաշնության արտաքին քաղաքականությունը ենթարկվեց քաղաքական և կառուցվածքային էական փոխակերպումների: Այդ փոփոխությունների իրական բովանդակությունն առավել ակնառու ձևով դրսևորվեց, մասնավորապես, «հետխորհրդային հարավ» անվանումը կրող ենթատարածաշրջանի նկատմամբ ռուսաստանյան ռազմավարության բովում, որը ներառում է Կենտրոնական Ասիայի և Անդրկովկասի երկրները: Պայմանավորված լինելով ոչ միայն և ոչ այնքան «տեղեղում» շատ արագ զարգացող շարժընթացների տրամաբանությամբ՝ Ռուսաստանի քաղաքականությունն այս տարածաշրջանում ուներ անցման շրջանին բնորոշ հակասություններ և տարափոխությունների ամբողջ մի «փաթեթ»: Վերջիններս, անշուշտ, որոշակիորեն փոխկապված էին 1990-ական թթ. սկզբին արտաքին քաղաքական վարույթի ինստիտուցիոնալ անկատարության հետ, բայց ոչ պակաս չափով պատճառաբանված էին Ռուսաստանում տիրող ներքաղաքական լարվածությամբ և միասնական արտաքին քաղաքական համադրույթի բացակայությամբ:

Վ. Պուտինի վարչակազմի իշխանության գալուց հետո ՌԴ տարածաշրջանային ռազմավարությունում սկսեցին գերակայել որակապես նոր գործոններ և մոտեցումներ, որոնք, ըստ երևույթին, երկարաժամկետ բնույթ կկրեն: Ստորև ներկայացվող սեղմ վերլուծական համապատկերի շրջանակում մենք կփորձենք համեմատական եզրով ներկայացնել Անդրկովկասում ժամանակակից ռուսաստանյան ռազմավարության հանգուցային միտումները:

ՌԴ արտաքին քաղաքականության ձևավորման սկզբնական փուլում ակնհայտ էր երկրի նոր ղեկավարության ձգտումը՝ որոշակիորեն մեկուսանալ անկայուն և տնտեսապես թույլ հետխորհրդային հարավից: Ռուսաստանի կառավարության ներսում տիրապետող լիբերալ գաղափարական համադրույթը, որն այն ժամանակ զուգակցվում էր Ա. Կոզիրևի, Ե. Գալդարի և Ա. Շոխիևի անունների հետ, ելնում էր եվրաստլանտյան կառույցների շրջանակում պետության անվտանգության ապահովման առաջնահերթությունից [1]: Հայեցակարգային տեսանկյունից՝ առաջին ալիքի ժողովրդավարների քաղաքական հայացքները խարսխված էին այն թեզի վրա, թե պե-

տության անվտանգությանը սպառնացող ռազմական վտանգներն այժմ կրում են երկրորդական բնույթ, մինչդեռ լայն հնարավորություններ են բացվել գոյություն ունեցող հակասությունները քաղաքական միջոցներով լուծելու համար: Հասկանալի է, որ հանրային քաղաքականության մակարդակում նորանկախ հանրապետությունների հետ հարաբերություններ զարգացնելու կանխադրույթը չէր վիճարկվում: Բայց իրականում գերակայող էր այն սցենարը (լավատեսական), ըստ որի՝ Ռուսաստանի ժամանակավոր «մեկուսացումը» հեռանկարում կձևափոխվի, և Մոսկվան կստանձնի քաղաքական և տնտեսական առաջատարի գործառնությունը ԱՊՀ բոլոր պետությունների համար: Նույն համատեքստում է անհրաժեշտ դիտարկել նաև վաղելցիկյան շրջանին բնորոշ պաշտոնական հայտարարություններն այն մասին, որ Ռուսաստանն անընդունելի էր համարում քաղաքական նկատառումներով ուժային միջոցներին ապավինելը: Իրականում առաջին արտգործնախարար Ա. Կոզիրևի հոչակած «բարիդրացիության գոտու» ստեղծման գաղափարի հենքում թաքնված էր ԱՊՀ երկրների հետ հարաբերությունների զարգացման պոզիտիվ հայեցակարգի բացակայությունը:

Անդրկովկասի պարագայում նման կարգի «շեշտադրումներն» իրենց արտացոլումը գտան, օրինակ, դարաբաղյան հակամարտության կարգավորմանն ուղղված և *ad hoc* քաղաքական ակցիաների բնույթ կրող որոշ նախաձեռնություններում: Դա վերաբերում էր Ժելեզնովոդսկում (Ռուսաստան) սկիզբ դրված քաղաքական կարգավորման գործընթացին և, ավելի ուշ, բայց նույն համատեքստում՝ ՌԴ ԱԳՆ միջնորդությամբ տեղի ունեցած Հայաստանի և Ադրբեյջանի նախագահների հանդիպմանը Մոսկվայում (1992թ. փետրվարի 20-ին):

Ակնհայտ է, որ չնայած հակամարտությունն իր նախնական փուլում կարգավորելու իրական ձգտմանը՝ նախաձեռնություններն ավելի շատ կրում էին «պահի» բնույթ, այլ ոչ թե մանրամասն մշակված միջոցառումների փաթեթ էին: 1992թ. ապրիլին, Անդրկովկաս կատարած իր առաջին պաշտոնական այցի ընթացքում, Ա. Կոզիրևը, փաստորեն, հաստատեց, որ տվյալ պահին Ռուսաստանը նպատակահարմար չի գտնում ինքնուրույն հանդես գալ, քանզի «ԵԱՀԽ խաղաղարար մեխանիզմներն աշխատում են մեր ընդհանուր շահերի օգտին» [2]: Ուշագրավ է նաև, որ նույն Ա. Կոզիրևն արտահայտվեց այն ոգով, թե ՆԱՏՕ խաղաղապահ հնարավորությունների օգտագործումը նախկին ԽՍՀՄ տարածքում ամենևին էլ չի հակասում Ռուսաստանի անվտանգության շահերին:

Սակայն նման ազատական գաղափարախոսությունը չդիմացավ պատմության քննությանը, և արդեն 1992թ. վերջին ռուսաստանյան քաղաքականության մեջ ի հայտ եկած նոր միտումները, ըստ էության, ազդարար-

րեցին վերադարձ «ավանդական» ուժագծերին՝ անվտանգության շահերի պաշտպանության ավելի հստակ և կոշտ մեթոդների օգտագործմամբ: Նման շրջադարձի հիմքային պատճառները մի քանիսն էին:

Նախ՝ ՌԴ տնտեսական բարեփոխման բացասական փորձը լրջորեն սասանեց Ե.Գայդարի լիբերալ կառավարության հեղինակությունը, որն, ինչպես հայտնի է, հանդիսանում էր հետխորհրդային տարածաշրջանից Ռուսաստանի «ժամանակավոր անջատման» գլխավոր ջատագովը: Այս իմաստով ազդանշանային էր Բ.Ելցինի 1992թ. հոկտեմբերյան ելույթը. նախագահը, փաստորեն, Ռուսաստանում բարեփոխումների հաջող իրագործումը ուղիղ փոխկապակցության մեջ դրեց ԱՊՀ սերտաճման գործընթացի հետ:

Երկրորդ՝ Ռուսաստանի հարավային սահմանների երկայնքով էթնոքաղաքական հակամարտությունների կտրուկ սրումը օպերատիվ արձագանքման և արագ ներգրավման էական խնդրի առջև կանգնեցրեց երկրի ղեկավարությանը: Մասնավորապես, 1992թ. ամռանը զինված դիմակայության վտանգավոր զարգացումը հարավօսական և մերձդնեստրյան հակամարտությունների գոտիներում յուրահատուկ «արագացուցիչ» դեր խաղաց ավելի հստակ ձևով որոշելու տարածաշրջանում ՌԴ ռազմավարական շահերի էությունը, տիրապետության ներքո գտնվող իրական ռեսուրսները և քաղաքական մանևրի սահմանները:

Երրորդ՝ 1992թ. մայիսին ԱՊՀ կառույցներից անջատ ՌԴ առանձին պաշտպանության նախարարության ստեղծումը լուրջ ինստիտուցիոնալ և հայեցակարգային մարտահրավեր նետեց ԱԳՆ և նրան հարող գործիչների լիբերալ մոտեցումներին: Հենց ՌԴ ՊՆ-ն, որի ենթակայության տակ անցան Ռուսաստանի սահմաններից դուրս տեղակայված մոտ 250 հազ. զինծառայողներ, սկզբնական շրջանում հանդես եկավ իբրև «գործուն ինստիտուցիոնալ դերակատար» և ՌԴ նոր աշխարհաքաղաքական ու միջազգային շահերի կրող [3]: Հենց ՌԴ ՊՆ-ն, *de facto* ներգրավված լինելով նախկին ԽՍՀՄ ենթատարածաշրջաններում ծավալվող գործընթացների մեջ, հանդես եկավ Ռուսաստանի արտաքին քաղաքական առաջնահերթությունների համակարգի «արդիականացման» գլխավոր նախաձեռնողի դերում: Հարկ է նշել, որ դեռ 1992թ. մայիսին հրապարակված ՌԴ ռազմական դոկտրինի նախագծում շեշտադրված էր աշխարհաքաղաքական գործոնների և պետության ռեսուրսների սահմանափակ լինելու հաշվառման անհրաժեշտությունը [4]:

1993-94թթ. ընթացքում ներռուսաստանյան համադրությունում տեղի ունեցած քաղաքական ուժերի լայն վերադասավորման արդյունքում բրիտանացի մի մասնագետի բնորոշմամբ՝ Մոսկվայում ձևավորվեց «կենտրոնամետ փոխհամաձայնություն» հետխորհրդային տարածքում վարվելիք քաղաքականության հիմնական սկզբունքների և գերխնդիրների շուրջ: Որ-

դեգրված նոր ռազմավարական ուժագծերի հենքում դրվեց Ռուսաստանի «հատուկ պատասխանատվության» գոտու մասին թեզը. ի դեմս ԱԳՆ-ի՝ 1993թ. հունվարին Մոսկվան պաշտոնապես հաստատեց, որ հիշյալ տարածաշրջանում չի բացառում «խաղաղապահ և իրավական շրջանակներում» ապավինումը ուժային միջոցներին՝ կայունության ապահովման և համատեղ անվտանգության համակարգի ստեղծման ճանապարհին [5]: Ընդ որում՝ այս ուղեգծի ռազմավարական ասպեկտներից մեկը հռչակվեց հետխորհրդային տարածաշրջանում ստեղծված *status quo*-ի պահպանումը, մինչդեռ այլ ուժերի հնարավոր միջամտության փորձերը հայտարարվեցին «վտանգավոր և հակաարդյունավետ»:

Նոր մոտեցումներն իրենց ընդհանուր արտահայտությունը գտան նաև արտաքին քաղաքականության դոկտրինալ մակարդակում: 1993թ. աշնանային խոր ներքաղաքական ճգնաժամը հաղթահարելուց մեկ ամիս անց հաստատվեց ՌԴ ռազմական դոկտրինը (1993թ. նոյեմբերի 3), որի հիմնական կանխադրություններից մեկն էր ՌԴ ռազմական ներկայության պահպանումը հետխորհրդային տարածաշրջանում: 1994թ. փետրվարին հայտարարվեց, որ Ռուսաստանին հաջողվել է իր սահմաններից դուրս պահպանել 28 ռազմական հանգրվան:

ՌԴ աշխարհաքաղաքական շահերի վերանայված համադրությունը կարծր ռազմավարական կեցվածքն, ըստ էության, միտված էր մի քանի սկզբունքային օրախնդիր հարցերի լուծմանը: Նախ, հաշվի առնելով Ռուսաստանի կենսական շահերի ոլորտ «երրորդ ուժերի» ներգրավման վտանգավորությունը, ինչպես նաև միջազգային ասպարեզում երկրի կարգավիճակը հաստատելու անհրաժեշտությունը՝ հետխորհրդային հակամարտությունների կարգավորումը, կայունության ապահովումը և խաղաղապահ գործողությունների իրականացումը ճանաչվեցին իբրև արտաքին քաղաքականության գերնպատակ: Հատկանշական է, որ հենց այս ռազմավարական ուղղությունն առանձնահատուկ կարևորություն ձեռք բերեց Ռուսաստանի «մերձավորարտասահմանյան» քաղաքականության մեջ՝ նախկինում տիրապետող տարածաշրջանային գործընթացները համապարփակ սխեմայով կառավարելու անհնարության պայմաններում: Խաղաղապահությունը հարակից շրջաններում, ըստ որոշ ազդեցիկ ռուսաստանյան գիտնականների, սկսեց դիտարկվել որպես զինուժի քաղաքական նպատակներով օգտագործման առավել ընդունելի և ճիշտ եղանակ [6]: Ուշագրավ է, որ այս մոտեցումը տիրապետող դարձավ այն ժամանակ, երբ փաստացիորեն տրոհվեց միատարր (հոմոգեն) ԱՊՀ անվտանգության համակարգի ստեղծման կարծրապատկերը: Ազդեցության և կառավարման ուղղակի լծակների բացակայության պայմաններում բյուրեղացավ ան-

վտանգության համակարգի համակենտրոն (ռուսաստանակենտրոն) մոդելի առաջնահերթությունը: Այս համատեքստում 1992թ. մայիսի 15-ին Տաշքենդում ԱՊՀ Հավաքական անվտանգության պայմանագրի ստորագրումը (Ռուսաստան, Հայաստան, Ուզբեկստան, Ղազախստան, Տաջիկստան, Ղրղզստան) ենթադրաբար միտված էր ավելի առարկայական հարթությունում «ճշգրտելու» նախկին ԽՍՀՄ տարածքում ընդհանուր անվտանգության պարամետրերը:

Ընդհանուր առմամբ՝ ԱՊՀ շրջանակում ՌԴ ռազմավարական ազդեցության պահպանման հիմնական «բաղադրիչները» հանգեցին հետևյալ գերխնդիրների ապահովմանը. ԱՊՀ տարածքում միջպետական հարաբերությունների «կարգավորման» գերակա իրավունքի վերահաստատում, կայունության ու խաղաղության պահպանում «մերձավոր արտասահմանում» և ԱՊՀ սերտաճման գործընթացների խթանում:

Չնայած մի շարք առանցքային հիմնադրույթների ու սկզբունքների շուրջ Մոսկվայում ձևավորված միջգերատեսչական և միջէլիտային համաձայնությանը՝ ռուսաստանյան քաղաքականության իրագործումն առանձին տարածաշրջանային ուղղություններում ուներ որոշակի իմաստով «դրվագային», հաճախ նաև հակասական էություն: Պատմության չափանիշներով կարճ ժամանակամիջոցում արտաքին քաղաքական համադրույթի փոփոխումը հանգեցրեց մի շարք «անհամապատասխանությունների» երևակմանը ՌԴ գործնական քաղաքականության մեջ: Վերջիններս շաղկապված էին և, հայտնի իմաստով, պայմանավորված էին մի կողմից՝ միջազգային ասպարեզում Ռուսաստանի ստանձնած «Ժողովրդավարական պարտականություններով», մյուս կողմից՝ «տեղերում» երկրի առարկայական շահերի պաշտպանության համար ընտրված մեթոդների միջև խորացող իրարամերժությամբ: Այդ հանգամանքն, անշուշտ, Ռուսաստանի տարածաշրջանային դերակատարությունը գնահատելիս՝ նկատելի բացասական ֆոն էր ստեղծում միջազգային հանրության շրջանում: Հատկանշական է, որ ԱՊՀ առանցքային գոտիներում ՌԴ գործողություններին բնորոշ հակասություններն սկսեցին դիտարկվել իբրև «ներհամակարգային գործոն», որը միահյուսված էր թե՛ ներռուսաստանյան քաղաքական բևեռացման (հետևանքների), թե՛ Ռուսաստանի և հետխորհրդային նորանկախ երկրների միջև առկա ռեսուրսային հսկայական անհամաչափության (հակառացիոնալության տարրեր) և թե՛ սառը պատերազմի ավարտից հետո առաջացած անորոշությունների հետ [7]:

Անդրկովկասի պարագայում, որտեղ էթնոքաղաքական հակամարտությունները 1992թ. երկրորդ կեսից թևակոխեցին լայնածավալ պատերազմների փուլ (վրաց-աբխազական և դարաբաղյան հակամարտություն-

ներ), մշակվեցին վարվելիք քաղաքականության մի քանի «աշխատանքային սկզբունքներ»:

Նախևառաջ՝ իբրև կայացած փաստ ընդունվեց անվտանգության հարթությունում Հյուսիսային Կովկասի և Անդրկովկասի կենսական փոխկապվածությունը:

Երկրորդ՝ պայմանավորված Անդրկովկասի նկատմամբ արտաքին ուժերի հետաքրքրության աճով և որդեգրված կոշտ կեցվածքին համահունչ՝ Անդրկովկասում «գրոյական հաշվով խաղի» կանխադրույթը վերածվեց գործնական քաղաքականության հենքային մի «ուղենիշի»: Այս իմաստով չափազանց հրատապ դարձավ այս հանրապետություններում Մոսկվային հավատարիմ քաղաքական ռեժիմների հաստատումը:

Հատկանշական է, որ չնայած գերիշխող (նախնական) հայեցակետին՝ «համապարփակ» հիմունքներով ընդգրկել բոլոր հետխորհրդային երկրները ռուսաստանակենտրոն անվտանգության համակարգի մեջ, իրականում ՌԴ ղեկավարությունն առաջնորդվում էր, այսպես կոչված, տարբերակված մոտեցմամբ: Դեռ 1993թ. մարտին ՌԴ պաշտպանության նախարար Պ. Գրաչովը հայտարարեց, որ սևծովյան ափը Ռուսաստանի ռազմավարական սահմաններից է, որտեղ ռազմական ներկայության պահպանումը երկրի անվտանգության ապահովման անկապտելի նախապայմաններից մեկն է: Ելնելով ռեսուրսների սահմանափակ լինելու, աշխարհաքաղաքական և պաշտպանական նպատակահարմարությունից, ինչպես նաև նկատի ունենալով հեռանկարային քաղաքական նախընտրելիությունը՝ որոշվեց, որ անդրկովկասյան տարածաշրջանում առավել սերտ ռազմաքաղաքական կապեր անհրաժեշտ է հաստատել Վրաստանի (կարևոր աշխարհագրական դիրք) և Հայաստանի (երկու ազդեցիկ տարածաշրջանային տեղությունների՝ Իրանի և Թուրքիայի հետ ցամաքային կապ) հետ:

1990-ական թթ. կեսերին ՌԴ անվտանգության քաղաքականության պարամետրերը տարածաշրջանում ավելի հստակ ուրվագիծ ստացան: Անդրկովկասում Ռուսաստանի փաստացի ռազմավարական ներկայության հենքը կազմեց եռյակը՝ խաղաղապահություն, ռազմական ներկայություն Հայաստանում ու Վրաստանում և ԱՊՀ արտաքին սահմանների համատեղ պաշտպանություն, որին շուտով հավելվեց նաև ԱՊՀ միասնական հակաօդային պաշտպանության համակարգը [8]:

Գործնականում 1994թ. մայիսին, հենց Ռուսաստանի դիվանագիտական և սահմանափակ ռազմաքաղաքական գործողությունների շնորհիվ, փաստորեն միաժամանակ դարաքաղյան և վրաց-աբխազական հակամարտությունների գոտիներում հաջողվեց հասնել հրադադարի հաստատման: Ընդ որում՝ 1994թ. հունիս-հուլիսին ԱՊՀ հովանու ներքո վրաց-աբխազական

բաժանարար գծում տեղակայվեցին ռուսաստանյան խաղաղապահ ստորաբաժանումներ: Ռուս խաղաղապահների ներկայությունը Հարավային Օսիայում (1992թ. հունիս) և վրաց-աբխազական շփման գոտում պահպանվում է նաև այսօր. համապատասխանաբար 530 և 1600 զինծառայող [9]:

Առաջավոր ռազմական տեղաբաշխման հայեցակարգին համապատասխան՝ 1995թ. գարնանը ՌԴ ռազմական բազայի մասին պայմանագրեր ստորագրվեցին Վրաստանի և Հայաստանի հետ: Ըստ այդ փաստաթղթերի՝ որոշակիացվեցին Վրաստանում չորս, իսկ Հայաստանում երկու ՌԴ ռազմական հենակետերի ներկայության կարգավիճակը և գործառնության պատասխանատվությունը: Այս հենակետերը Անդրկովկասում ռուսաստանյան զորախմբի (*IPB3*) կազմում ենթարկվեցին Հյուսիսկովկասյան զինվորական շրջանի հրամանատարությանը: Ներկա պահին, ԵԱՀԿ ստամբուլյան որոշումներով (1999թ. նոյեմբեր) Վրաստանում երկու հենակետ փակելուց հետո, Անդրկովկասում ռուսաստանյան զորախմբի կազմում են 7000 զինծառայող [9]:

Ըստ էության, 1990-ական թթ. Ռուսաստանը հանգուցային դեր խաղաց Անդրկովկասում նոր *status quo*-ի հաստատման գործում, ընդ որում՝ բավականաչափ նախադրյալներ ստեղծելով ձևավորված ռազմաքաղաքական հավասարակշռության վրա իր որոշիչ ազդեցությունը պահպանելու համար: Այս առիթով Մեծ Բրիտանիայի միջազգային հետազոտությունների թագավորական ինստիտուտի վերլուծական հետազոտություններից մեկում որոշակի տարակուսանք էր արտահայտվում Անդրկովկասում առաջացած տարիմաստ կացության կապակցությամբ, որտեղ 1990-ական թթ. կեսերից գերակայում էին երկու հակասական միտումներ. կառավարող քաղաքական ռեժիմների կայունացում և հարաբերական ամրապնդում՝ տարածաշրջանային հակամարտությունների չկարգավորված լինելու պայմաններում [10]:

Հարկ է նշել, որ 1990-ական թթ. ընթացքում տարածաշրջանային թատերաբեմում աշխարհաքաղաքական և տնտեսական մրցապայքարի ուժգնացմանը զուգընթաց, առկա իրավիճակը բնորոշելիս հաճախակի սկսեցին օգտագործվել «գրոյական հաշվով խաղ», «նեոիմպերիալիզմ», «հեգեմոնիստական կայունություն» և այս կարգի այլ տերմիններ: Հարակից երկրներում տեղի ունեցող զարգացումների նկատմամբ Ռուսաստանի դիրքորոշման կոշտացումը ոչ միանշանակ արձագանք գտավ Արևմուտքում: Ռուսաստանի շեշտակի ռազմաքաղաքական ակտիվացումը հետխորհրդային տարածաշրջանում արևմտյան փորձագետների զգալի մասը գնահատեց իբրև «նեոկայսերական ռևանշիզմ»՝ ուղղված հեգեմոնիայի հաստատմանը նախկին ԽՍՀՄ սահմաններում: Նման շարժընթացի հետևանքների շարքում մատնանշվեց նաև հենց Ռուսաստանում միապետական

շրջադարձի լուրջ հավանականությունը: Ճիշտ է՝ սթափ մտածող մասնագետները, այնուամենայնիվ, հակված չէին չափազանցելու տեղի ունեցող տեղաշարժերում «անշրջելի» զարգացման հնարավորությունը և առավել ևս՝ դիտարկել Ռուսաստանն իբրև ռեզիդենցիայի տերություն: Այս համատեքստում, մեր կարծիքով, Մոսկվայի գերնպատակը տարածաշրջանում կարելի է բնորոշել որպես տարածաշրջանային կայունության և զարգացման «վերահսկիչ փաթեթը» իրեն վերապահելու ձգտում, բայց ոչ ուղղակի գերիշխանության հաստատում: Եվ 1995թ. սեպտեմբերին Բ.Ելցինի ստորագրած ԱՊՀ անդամ պետությունների նկատմամբ Ռուսաստանի Դաշնության ռազմավարական ուղեգծի մասին հրամանագիրը, ըստ էության, փաստում էր այդ իրողությունը:

Այնուամենայնիվ, ինչպես 1990-ական թթ. հետագա ընթացքը ցույց տվեց, ԱՊՀ սերտաճած անվտանգության համակարգի ստեղծումը, այն ձևով, ինչպես նախատեսվում էր, բավականին լուրջ քաղաքական և այլ բնույթի խոչընդոտների հանդիպեց: Հետխորհրդային տարածաշրջանում Արևմուտքի հետևողական ներգրավման ենթատեքստում՝ նկատելիորեն սրվեցին Ռուսաստանի և ԱՊՀ մի շարք պետությունների փոխհարաբերությունները, մինչդեռ նախկին ԽՍՀՄ տարածքի ընկալումը աստիճանաբար կորցրեց երբեմնի միասնական աշխարհաքաղաքական «խառնահանքի» յուրահատկությունը: Ավելին, ներքաղաքական բևեռացման խորացումը, տնտեսական հետընթացն ու բարեփոխումների գործընթացի լճացումը, չեչենական առաջին պատերազմի անփառունակ ավարտը էապես թուլացրին Ռուսաստանի ռեսուրսային հենքն արտաքին աշխարհում: Անդրկովկասյան հակամարտությունների կարգավորման գործում ՌԴ վճռական ազդեցությունը թեև հաջողվեց պահպանել, սակայն ներագրման լծակների փաստացի հանգեցումը գլխավորապես ռազմաքաղաքական բլոկի սահմաններում զգալիորեն նեղացրեց տարածաշրջանային այլ չափումներում ռուսաստանյան շահերի գործնական պաշտպանության հնարավորությունները:

Կենտրոնամետ միտումները պահպանելու նպատակով «տարբեր արագությունների սերտաճման» գործընթացին անցումը հանգեցրեց Մոսկվայի համար տագնապալի «աշխարհաքաղաքական բազմազանության» միտման ուժեղացմանը հետխորհրդային տարածաշրջանում: Անդրկովկասի պարագայում այդ երևույթի առարկայական դրսևորումներից էր այն, որ Ադրբեյջանը և Վրաստանը հրաժարվեցին 1999թ. ապրիլին երկարաձգել իրենց մասնակցությունը ԱՊՀ ՀԱՊ-ում, իսկ ռուսաստանյան սահմանապահները շուտով լքեցին վրաց-թուրքական սահմանը: Նույն տարում, ոչ առանց արտաքին խթանման, կազմավորվեց քաղաքական շարժառիթներով միավորված հետխորհրդային երկրների առաջին խմբավորումը՝



ՎՈՒԱՄ-ը (Վրաստան, Ուկրաինա, Ադրբեջան, Մոլդովա), որն ի սկզբանե ԱՊՀ-ին այլընտրանք դառնալու նկրտումներ էր փայփայում:

Փաստորեն, տասնամյակի վերջին ակնհայտ դարձավ, որ Մոսկվային չհաջողվեց ԱՊՀ տարածքում կայունության երաշխավորի իր գործառնության դերը փոխակերպել կազմակերպչական գերակայության: Թեև Ռուսաստանի կարգավիճակային դերն իբրև մի երկրի, առանց որի հնարավոր չէ Անդրկովկասում որևէ երկարաժամկետ ծրագրի իրագործումը, ընդունվում էր, բայց տարածաշրջանում փոխհարաբերությունների իրական բովանդակությունը նշված ժամանակահատվածում դժվար է միանշանակ գնահատել: Այս կապակցությամբ ուշագրավ է ռուսաստանյան մասնագետ Յու.Շիշկովի տեսակետը. *«Գարնոր է նախկին պաշտպանական ենթակառուցվածքի պահպանման եղանակը գտնել: Սկզբունքորեն՝ գոյություն ունեն միայն երկու հնարավորություն. ԱՊՀ մյուս պետությունների հետ կնքել ռազմական դաշինք և/կամ փորձել նրանց ընդգրկել Ռուսաստանի հետ միասնական տնտեսական գոտու մեջ, որպեսզի Եվրոպական միության օրինակով համատեղ անվտանգությունը և պաշտպանությունը դառնան ինքնըստինքյան ենթադրվող որոշումներ: Սկզբից նեթ օգտագործվեցին այդ երկու տարբերակները»* (գուգահեռաբար - Վ.Ա.) [11]:

2000թ. մարտին, Վ.Պուտինի վարչակազմի իշխանության գալուց հետո, ՌԴ ռազմավարական օրակարգը ԱՊՀ անդամ երկրների նկատմամբ զգալիորեն ընդլայնվեց, իսկ որոշ առումներով ենթարկվեց նաև նշանակալի փոփոխությունների. որակական տեղաշարժեր գրանցվեցին ինչպես հայեցակարգային, այնպես էլ գործնական քաղաքականության հարթություններում: Նոր վարչակազմը ի սկզբանե հստակ քայլեր ձեռնարկեց որոշումների կայացման գործընթացը կենտրոնացնելու ուղղությամբ, մինչդեռ արտաքին քաղաքականության վարույթի գլխավոր սկզբունքներ հռչակվեցին ռացիոնալիզմը, պետության ռազմավարական գերակայությունների էապես ավելի հստակ որոշակիացումը (մասնավորապես՝ տարածաշրջանային մակարդակում), սեփական հնարավորությունների ադեկվատ գնահատումը: Հատկանշական է, որ Վ.Պուտինի օրոք կովկասյան քաղաքականությունը փաստորեն «դիմագրվեց». ի տարբերություն ելցինյան շրջանի, կովկասյան հարցերում հեղինակություն վայելող շատ անձնավորություններ դուրս մղվեցին արդիական քաղաքականության բնագավառից: Տվյալ ուղղությամբ վարվող քաղաքականության հիմնական շարժառիթն ու նպատակը հայտարարվեց համապետական շահը:

Վերոհիշյալի համատեքստում անհրաժեշտ է նշել, որ ի տարբերություն 1990-ական թթ. կովկասյան քաղաքական համադրույթին բնորոշ գծերի՝ որոշակիորեն «սահմանազատվեցին» դաշնային (Հյուսիսային Կովկաս) և

արտաքին քաղաքականության (Անդրկովկաս) ոլորտները: Վերջին հանգամանքը ազդանշանային էր 1999թ. աշնանը Չեչնիայում ձեռնարկված կոշտ գործողությունների ֆոնին: Մյուս կողմից՝ այս ուղեգիծը համահունչ էր ավելի լայն՝ կասպյան տարածաշրջանում որդեգրված ուժագծերին: Նախ՝ 2002-2003թթ. Ղազախստանի և Ադրբեջանի միջև համապատասխան համաձայնություններ ձեռք բերվեցին Կասպից ծովի հատվածային սահմանագատման վերաբերյալ, երկրորդ՝ որոշվեց հիմնական ֆինանսական և տեխնոլոգիական ռեսուրսները կենտրոնացնել ծովի հյուսիսային հատվածում (ռուս-ղազախական), երրորդ՝ գործուն միջոցներ ձեռնարկվեցին Կասպյան ավազանում ՌԴ ռազմական ներկայությունը հզորացնելու ուղղությամբ:

Դեռ 2000թ. ապրիլին գումարված ՌԴ Անվտանգության խորհրդի նիստում Վ. Պուտինը, ըստ էության, ակնարկեց, որ Կասպիցում ստեղծված իրավիճակը բնավ չի բավարարում ռուսաստանյան շահերը, սակայն միաժամանակ հստակեցվեց, որ Մոսկվան մտադիր չէ դիմելու անկանխատեսելի «անհամաչափ» քայլերի: Նախագահի կոչը՝ համապետական ռազմավարական ուղեգծի շրջանակում համախմբել պետական և մասնավոր շահերը, որոշ իմաստով փաստում էր տարածաշրջանում «համընդհանուր» շուկայական սկզբունքների վրա հիմնված խաղի կանոնների ընդունման մասին: Ինչպես անցած չորս տարիների փորձն է ցույց տալիս, մասնավոր խոշոր շահերի զուգակցմամբ ազդեցության լծակների և ռեսուրսների համախմբումը կասպյան տարածաշրջանում չի բացառում պետության «արտատնտեսական», բայցև ռազմավարական ուղղվածություն ունեցող շահերի առաջնությունը:

Վերջին տարիներին ռուսաստանյան քաղաքականության մեջ տեղի ունեցող լուրջ փոխակերպումների ընդհանուր բովանդակությունն ակնհայտ է. հզորացնել և հստակեցնել պետական շահը հանրային և քաղաքական կյանքի բոլոր չափումներում: Ինչ վերաբերում է Անդրկովկասի նկատմամբ Վ. Պուտինի վարչակազմի ռազմավարության հիմնական միտումներին, ապա դրանք բյուրեղանում են նոր *modus operandi*-ի շրջանակում:

**Առաջին.** սկզբից ներքնականության բնագավառի հետ կապված խնդիրների ամբողջությունը առաջնահերթ տեղ գրավեց Ռուսաստանի միջազգային քաղաքականության երկարաժամկետ օրակարգում: Հատկանշական է, որ անվտանգության ապահովումը՝ որպես պետության հիմքային գործառույթ, ձեռք բերեց էապես ավելի լայն և համապարփակ մեկնաբանում՝ հետևաբար ենթադրելով համակարգված լայնածավալ արձագանքում: Ահաբեկչության դեմ պայքարը վերաճեց ԱՊՀ երկրների հետ բազմակողմանի և երկկողմանի համագործակցության հիմնական պլատֆորմի՝ ընդգրկելով նաև ռազմաքաղաքական համագործակցության հանգուցային

բաղկացուցիչները: Նկատելիորեն աճել է հատուկ ծառայությունների նախկին և գործող ներկայացուցիչների ազդեցությունը ՌԴ ռազմավարական շրջակայքում քաղաքականության ձևավորման վրա, ինչը, ըստ փորձագետների, նպաստում է «ՌԴ շահերի կենտրոնացված և նպատակաուղղված պաշտպանությանը» [12]:

**Երկրորդ.** ՌԴ իշխանությունները վերջին ժամանակահատվածում նպատակաուղղված ջանքեր գործադրեցին՝ միտված ԱՊՀ շրջանակում ստեղծված կառույցների, մասնակից երկրների հարաբերությունների և պատասխանատվության ինստիտուցիոնալացմանը: Սա ԱՊՀ և մասնավորապես՝ Համագործակցության հարավային գոտու նկատմամբ Մոսկվայի նոր մոտեցման, թերևս, ամենակարևոր բնորոշիչներից է: Այս համատեքստում ազդանշանային իրադարձություն էր Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության ստեղծումը (Ռուսաստան, Հայաստան, Բելառուս, Ղազախստան, Տաջիկստան, Ղրղզստան), որի կանոնադրությունը հաստատվեց 2002թ. հոկտեմբերին: ՆԱՏՕ կանոնադրության 5-րդ հոդվածի օրինակով՝ զինված ագրեսիան կազմակերպության որևէ անդամի նկատմամբ մեքենայորեն դիտարկվում է իբրև հարձակում կազմակերպության բոլոր մասնակից անդամների վրա: Ի տարբերություն նախկինում գործող «հարձակվողին հետ մղելու նպատակով բազմակողմանի քննարկումներ սկսելու» մասին ՀԱՊ դրույթի՝ անվտանգության փոխադարձ երաշխիքների ֆորմալացումն ուղղված է գործող տարածաշրջանային անվտանգության կառույցի գործնականության աշխուժացմանը [13]: Վերջին տարիներին մի շարք փաստաթղթեր են ստորագրվել՝ ուղղված ՀԱՊԿ գործնականությունն աշխուժացնելուն (որոշումների ընդունման ընթացակարգ, զինուժի համատեղ օգտագործում, օպերատիվ համատեղելիության, տեղեկատվության փոխանակում, ռազմատեխնիկական համագործակցություն):

Ռազմատեխնիկական համագործակցությունը բավարար մակարդակի վրա պահելու և ՀԱՊԿ անդամ պետությունների համախմբումը խթանելու նպատակով որոշվեց Ռուսաստանում արտադրված սպառազինություններն այդ երկրներին մատակարարել ներռուսաստանյան գներով: Ռուսաստանյան մասնագետների հաշվարկով՝ 2003թ. հետո ԱՊՀ երկրների լայնածավալ վերագինման կարիքները կհասնեն տարեկան \$150 մլրդ-ի [14]: Ըստ ամենայնի՝ ռազմատեխնիկական գործակցության մասին համաձայնագրերը կունենան իրական բովանդակություն: Օրինակ, 2004թ. մայիսին Երևանյան օդանավակայանում վայրէջք կատարեցին երկու ռազմատրանսպորտային *Ил-76* ինքնաթիռներ, որոնք Հայաստանը գնել է ներռուսաստանյան գներով:

Կարելի է ենթադրել, որ գործնականության և տարածաշրջանում

ամուր իրավապայմանագրային ներկայության հենքի զուգակցումը Մոսկվայում դիտարկվում է իբրև Անդրկովկասում ռուսաստանյան դիրքերի համախմբման և հզորացման ընդունելի եղանակ:

Միննույն ժամանակ, վերջին տարիների փորձը վկայում է, որ երկկողմանի հարաբերությունների զարգացումն առանձնահատուկ կարևորություն է ստացել: Անդրկովկասում դա մասնավորապես վերաբերում է Հայաստանի և Ռուսաստանի հարաբերություններին, որոնք վաղուց արդեն ձեռք են բերել ռազմավարական համագործակցության բնույթ: Անվտանգության բնագավառում հայ-ռուսական հարաբերությունները միակն են տարածաշրջանում, որ 1990-ական թթ. սկզբից զարգանում են հետևողական-էքստենսիվ հունով: Այնուամենայնիվ, ՌԴ տարածաշրջանային քաղաքականության փոփոխություններին զուգընթաց, նոր միտումները անդրադարձան հայ-ռուսական համագործակցության որոշակի կողմերի վրա նույնպես: 2000թ. մարտյան արձանագրությամբ ամրագրվեց Հայաստանում 25 տարով ռազմական ներկայություն պահպանելու Ռուսաստանի իրավունքը: Նույն թվականի սեպտեմբերի 27-ին երկու երկրների պաշտպանության նախարարները ստորագրեցին ռազմական համագործակցության վերաբերյալ 3 համաձայնագրեր՝ ռազմական գործողությունների համատեղ պլանավորման, Հայաստանում ՌԴ ռազմական ներկայությունը կանոնակարգող դրույթների և միմյանց օդային տարածքը ռազմաօդային ուժերի կողմից փոխադարձ օգտագործելու մասին փաստաթղթերը [15]: 2001թ. հոկտեմբերի 1-ին պաշտպանության նախարարները ստորագրեցին ռազմական ենթակառուցվածքների համատեղ օգտագործման և տեղեկատվական բնագավառում փոխանակման մասին միջպետական համաձայնագրերը [16]: Մինչ այդ՝ 1999թ. մարտին, Ռուսաստանն ու Հայաստանը ստորագրեցին «ՀՀ և ՌԴ հակաօդային պաշտպանության համատեղ գործողությունների կանոնակարգը»: Նախանշված միջոցառումների ավարտից հետո Հայաստանի տարածքում տեղակայված հակաօդային պաշտպանության և հետախուզման միջոցներն ընդգրկվեցին ՀՕՊ ընդհանուր համակարգի մեջ: 2001թ. ապրիլին ռազմական և ռազմատեխնիկական համագործակցությունը խթանվեց զինուժի միացյալ ստորաբաժանման ստեղծման որոշմամբ [17]: Նախատեսվում է, որ շուտով Հայաստանի տարածքում կսկսի գործել ՀԱՊԿ արագ արձագանքման կոլեկտիվ ուժերի խմբավորումը (անդրկովկասյան ուղղություն)՝ 1500 զինծառայող անձնակազմով [18]:

Այս ամենի հետ մեկտեղ՝ ակնհայտ է, որ Վ.Պուտինի վարչակազմի օրոք ռուսաստանյան ռազմական (քաղաքական) ներկայության ուրվանկարը աստիճանաբար ձևափոխվում է: Անշուշտ, ռազմական հենակետերը շարունակում են կրել տարածաշրջանում ՌԴ ազգային անվտանգության

կարևորագույն բաղկացուցիչ և տարածաշրջանային զարգացման վրա ներազդելու էական գործոնի գործառույթը: Մակայն նույն ժամանակ, 1999թ. ի կատարումն ընդունվեց ՌԴ արտասահմանյան ռազմական տեղակայման վերակազմակերպման նոր ծրագիրը: Այս ոլորտում ուրվագծվող փոփոխությունների «անուղղակի» արտացոլումն էր 1999թ. նոյեմբերին ԵԱՀԿ ստամբուլյան գագաթաժողովում ստորագրված Եվրոպայում սովորական սպառազինությունների մասին պայմանագրի (ԵՍՍՊ) արդիականացման համաձայնագիրը: Ստորագրված փաստաթղթի համաձայն՝ Ռուսաստանին իրավունք վերապահվեց Վրաստանում իր զորախմբի ներկայությունը պահպանել բազային ժամանակավոր տեղակայման պարամետրերում (153 տանկ, 241 զրահամեքենա, 140 հրետանային համակարգ). նախկինում գործող չորս ռազմահենակետերից երկուսն արդեն փակվել են, մյուս երկուսի հարցը (Բաթում, Ախալքալաք) պետք է կարգավորվի երկկողմանի ռուս-վրացական ձևաչափում [19]:

Մեր կարծիքով, ՌԴ ռազմական քաղաքականության փոխակերպման հիմնական դրդապատճառներից առավել անհրաժեշտ է մատնանշել հետևյալները: Արդի «անհամաչափ» սպառնալիքները, ինչպիսիք են ահաբեկչությունը, անօրինական զինված խմբավորումները, թմրանյութերի տարածումը և այլն, ստիպում են շեշտադրումների որոշակի տեղափոխում կատարել՝ ռազմաուժային առավել գործուն արձագանքման նպատակով: Նախկին առաջնահերթությունները, որոնք կոդմնորոշված էին «դասական» պաշտպանական միությունների կազմավորմանը, թեև չեն կորցրել իրենց նպատակամիտվածությունը, սակայն չեն կարող լիիրավ բավարարել նոր մարտահրավերներին դիմագրավելու ազգային անվտանգության կարիքները: Այս իմաստով զսպման ավանդական քաղաքականությունից նախանշված շրջադարձը հոգուտ ճկուն և շարժունակ զինուժի ստեղծման՝ որոշ չափով թելադրված է իրավիճակային ադեկվատ վերլուծությամբ: Նույնատիպ նկատառումներով են պայմանավորված նաև երեք աշխարհագրական ուղղություններում ՀԱՊԿ արագ արձագանքման ուժերի կազմավորման մասին որոշումը և արտասահմանում ռազմական ներկայության թվային կրճատումը: Երկրորդ՝ տվյալ տարածաշրջանում ՌԴ քանակական պարամետրերի վրա իր «կրավորական» ազդեցությունն ունեցավ նաև եվրատլանտյան անվտանգության կառույցների շարժընթացը դեպի արևելք: Եթե 1990-ական թթ. ընթացքում սպառազինությունների քանակության և կովկասյան տարածաշրջանում ՌԴ քաղաքականության առանձին դրվագների հետ կապված հիմնախնդիրներն ընդհանուր առմամբ քննվում էին իբրև «անհամապատասխանության դիսկրետ նախադեպեր», ապա ՆԱՏՕ ընդլայնման երկրորդ «ալիքից» հետո իրավիճակը փոխվեց: Այն պայմաններ

րում, երբ ՆԱՏՕ ռազմական մեքենան ներկայությունը պահպանում է Ռուսաստանի համար ռազմավարական երկու թևերում (Մերձբալթիկա, Անդրկովկաս), բավականաչափ բարդ է հաշվի չնստել տարածաշրջանային կոնկրետ հարցերի շուրջ Արևմուտքի որոշակիացող դիրքորոշման հետ [20]: Առավել ևս, որ հենց Մոսկվան ԵՄՄՊ արդիականացման նախաձեռնողի դերում հանդես եկավ: Երրորդ՝ հետխորհրդային տարածքում ՌԴ ընդհանուր ռազմավարության մեջ վերջերս ի հայտ եկած «համապարփակ» մոտեցմանը զուգընթաց՝ աստիճանաբար վերաբնորոշվում է նաև ռազմական գործոնի դերը:

**Երրորդ.** ներկայիս իշխանությունները, ելնելով պրագմատիկ նկատառումներից, նախաձեռնեցին ԱՊՀ տարածքում ենթատարածաշրջանային կազմավորումների ստեղծումը, որոնք միավորված են տարաբնույթ քաղաքական և տնտեսական շարժառիթներով: 2004թ. մայիսյան ուղերձում (ՌԴ Դաշնային ժողովին) Վ. Պուտինն ուղղակի հայտարարեց, որ արտաքին տնտեսական քաղաքականության գերակայություն են հանդիսանում Անկախ Պետությունների Համագործակցությունը և «նրա ներսում ստեղծված նոր միությունները» [21]: Մասնագիտացված ինտեգրացիոն կառույցների (Եվրասիական տնտեսական ընկերակցություն, Շանհայի համագործակցության կազմակերպություն, «քառյակ», ՀԱՊԿ) կազմավորումը փաստում է, որ ՌԴ ղեկավարությունը, համենայնդեպս՝ միջնաժամկետ հեռանկարում, հրաժարվում է բազմապրոֆիլ միատարր ԱՊՀ-ի գաղափարից: Մոսկվայում գերակայեց այն տեսակետը, համաձայն որի՝ սուրբեզիոնալիզմը հանդիսանում է սերտաճման ադեկվատ համադրույթ, որի շրջանակում ավելի դյուրին է կազմակերպել գործնական համագործակցությունը: Տարբերակված մոտեցման միտումներն ակնառու էին դեռևս 1990-ական թթ. երկրորդ կեսից [22], սակայն Վ. Պուտինի վարչակազմի օրոք այն վերածվեց պետական քաղաքականության սկզբունքի:

**Չորրորդ.** անդրկովկասյան տարածաշրջանում ժամանակակից ՌԴ ռազմավարության երևի թե կարևորագույն «նորարարություն» է ռուսաստանյան կապիտալի թռիչքաձև ակտիվացումը անդրկովկասյան հանրապետություններում: Հատկանշական է, որ խոշոր կապիտալի լայնածավալ ներթափանցումը Հայաստան և Վրաստան ունի բացահայտ «պետական» չափում: Ուշադրություն է գրավում տնտեսական և էներգետիկ ծավալման ռազմավարական ուղղվածությունը՝ արդյունաբերության և ենթակառուցվածքի հանգուցային ձեռնարկությունների ու հաստատությունների ձեռքբերում: Ըստ երևույթին, միջազգային թատերաբեմում իրավիճակի դինամիկ զարգացման և աշխարհատնտեսական հարաբերությունների ոլորտ Անդրկովկասի ներգրավման տեմպերի արագացման համատեքստում՝

տվյալ քաղաքականության երկարաժամկետ նպատակն է ուժգնացնել տարածաշրջանի երկրների կառուցվածքային փոխկապվածությունը և կախումը Ռուսաստանից և, համապատասխանաբար, տիրապետել միջոցների՝ այդ հարաբերությունների քաղաքական ասպեկտների վրա ազդելու համար: Տարածաշրջանում ՌԴ տնտեսական-կառուցվածքային ներգրավման ցանկալի ծավալը բարձրաձայնեց էներգետիկայի նախկին նախարար Յու.Շաֆրանիկը 2003թ. ապրիլին. «Մենք չունենք այլ ռազմավարություն, քան ակտիվորեն ներդրումներ կատարել կասպյան տարածաշրջանի երկրներում և մեր ընկերությունների վերահսկողության ներքո պահել այդ երկրների ռեսուրսների 30%-ը: Դա հնարավոր է և իրական» [23]:

Իրականում վերջին երկու-երեք տարիների ընթացքում խոշորագույն ռուսաստանյան պետական և բաժնետիրական ընկերություններն իրենց վերահսկողության տակ առան Հայաստանի հիմնական էներգետիկ հզորությունները: Ըստ միջպետական համաձայնությունների (2002թ. հոկտեմբեր)՝ ՀՀ \$100 մլն պետական պարտքը մարվեց ի հաշիվ 5 հայաստանյան ձեռնարկությունների Ռուսաստանին փոխանցմամբ՝ առաջնորդվելով «գույք պարտքի դիմաց» սկզբունքով: Դրանց թվում էին Հրազդանի ՋԷԿ-ի բլոկները (ապահովում են Հայաստանի էլեկտրաէներգիայի 40%-ը) և պաշտպանության համակարգի մի քանի հիմնարկություններ: Բացի այդ՝ ՌԴ խոշորագույն «ЕЭС России» բաժնետիրական ընկերության տնօրինության տակ անցավ Հայկական ԱԷԿ-ի ֆինանսական հոսքերի վերահսկողությունը՝ ի հաշիվ 2003թ. հունվարի դրությամբ ՀԱԷԿ-ի \$40 մլն միջուկային վառելիքի մատակարարման պարտքի մարման [24]: Ռուսաստանյան «Газпром»-ին է պատկանում նաև Հայաստանի գազամատակարարման ցանցի վերահսկիչ փաթեթը: Նույն ընկերությունը փաստորեն ծածկում է Հայաստանի գազի ներմուծման ամբողջ ծավալը: 2004թ. գարնանը Ռուսաստանի «Внешторгбанк»-ը գնեց իր ծավալով Հայաստանի երկրորդ բանկի՝ «Խնայբանկի» վերահսկիչ փաթեթը, իսկ «Սիբիրյան ավիաուղիները»՝ ՀՀ խոշորագույն փոխադրիչ «Հայկական ավիաուղիներին»: Շուտով ռուսաստանյան ֆինանսաարդյունաբերական հսկաներից մեկի վերահսկողության ներքո կանցնի Եվրասիայում քիմիական արտադրության խոշորագույն ձեռնարկություններից մեկը՝ «Նախիտը»: 2003թ. հունվարին «Рысат»-ը \$500 հազ.-ով գնեց «Արմենալի»-ի բաժնետոմսերի մնացյալ 26%-ը՝ դառնալով այլումին արտադրող այդ մեծ ձեռնարկության լիիրավ սեփականատերը [25]: Զարմանալի չէ, որ 2003թ. ապրանքաշրջանառությունը երկու երկրների միջև կտրուկ աճեց 34%-ով:

Տնտեսական արագընթաց ծավալման նույն ուղեգիծն իրագործվում է նաև Վրաստանում: 2004թ. մայիսին ռուսաստանյան գործարարների պաշ-

տոնական մի պատվիրակություն ժամանեց Թբիլիսի՝ ՌԴ տնտեսական զարգացման և առևտրի նախարար Գ. Գրեֆի գլխավորությամբ: Հետաքրքրության կիզակետում էին, ինչպես Հայաստանի դեպքում, Վրաստանի էներգետիկ ենթակառուցվածքը և արդյունաբերական ոլորտում հեռանկարային ներդրումային ծրագրերը: Պարզվեց, որ Մոսկվայում մինչ այդ արդեն քննարկվել և ցուցակագրվել էին վրացական բոլոր այն արտադրական ձեռնարկություններն ու ենթակառուցվածքի օբյեկտները, որոնք որոշակի հետաքրքրություն են ներկայացնում ռուսաստանյան խոշոր կապիտալի համար: Մինչ այդ՝ 2003թ. մայիսին ստեղծվել էր «Грузроsgazprom» համատեղ ձեռնարկությունը, որը ստանձնել է ՌԴ-ից գազի առաքումը և բաշխումը ողջ հանրապետությունում [26]: Նույն ժամանակ՝ *РАО «ЕЭС России»*-ն ամերիկյան «*AES Silk Road*» ընկերությունից վերագնեց վրացական էլեկտրացանցի կառավարման և սեփականության մենաշնորհը: Ակնարկվում է նաև, որ «*Промышленные инвесторы*» հոլդինգը առաջիկա 3 տարիների ընթացքում Վրաստանի տնտեսությունում կներդնի մինչև \$200 մլն [27]:

Նախկին ԽՍՀՄ տարածքում ֆինանսատնտեսական ծավալման ռազմավարության շրջանակում՝ Ռուսաստանի խոշորագույն ընկերությունները որոշակի շահեր են հետապնդում նաև Ադրբեջանում: Թեև այս հանրապետության նկատմամբ վարվող քաղաքականությունը համադրվում է ՌԴ ավելի լայն՝ կասպյան ուղեգծի համատեքստում, Ադրբեջանը նույնպես գտնվում է անդրկովկասյան տարածաշրջանում ՌԴ «կառուցվածքային ներգրավման» տրամագծում: Այդ մասին է փաստում, օրինակ, ռուսաստանյան ընկերությունների նպատակաուղղվածությունը՝ հաստատվել Ադրբեջանի էներգետիկ սեկտորում: Այսպես, 2004թ. մայիսին *РАО «ЕЭС России»*-ն և «Ագերէներջի» ԲԲԸ-ն ստորագրեցին էներգետիկայի բնագավառում համագործակցության մասին հուշագիրը: Փաստաթղթով նախատեսվում է, որ ապագայում երկու կողմերը կմեծացնեն էլեկտրաէներգիայի փոխառաքման ծավալները՝ ապահովելով էներգահամակարգերի սինքրոն աշխատանքը: Ակնարկվում է նաև, որ հեռանկարում ռուսաստանյան ընկերությունները հնարավորություն կստանան մասնակցելու նոր էլեկտրացանցերի կառուցմանը Ադրբեջանում և, թերևս, ամենակարևորը՝ «կազմակերպելու Ռուսաստանի, Ադրբեջանի և Իրանի էներգահամակարգերի զուգահեռ աշխատանքը» [28]: Ըստ ամենայնի՝ ռուսաստանցիները բավականին լուրջ են վերաբերվում Իրանի հնարավոր ներգրավմանը միասնական էներգետիկ համակարգի մեջ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ադրբեջանական էլեկտրացանցերը վերահսկվում են թուրքական ընկերությունների կողմից, *РАО «ЕЭС»*-ը պատրաստակամություն է հայտնում անհրաժեշտ ներդրումներ կատարել Ադրբեջանում նոր էներգահաղորդիչ և արտադրական ենթակա-



ռուցվածքներ ստեղծելու հարցում [29]: Անշուշտ, այս նախագծերի իրագործումն առարկայական խթան կհանդիսանա «Հյուսիս-Հարավ» ծրագրում Ադրբեջանին որոշակիորեն ներգրավված պահելու համար:

Տնտեսական ակտիվացումը տարածաշրջանում բավականաչափ նախադրյալներ է ստեղծում Ռուսաստանի ներկայության նախկին «ասիմետրիկ համադրույթը» փոխարինելու ավելի հավասարակշռված ներկայության *modus*-ով՝ հենվելով պետության շահերի լայն հայեցակարգային ընկալման վրա: Նոր առաջնահերթությունների ընդունումը բերում է նաև Մոսկվայի փաստացի նահանջին Անդրկովկասում հակամարտ աշխարհաքաղաքական խաղի մոդելից: Դեռ 2000թ. ապրիլին այդ մասին բավականին պարզ ակնարկեց Վ. Պուտինը: Հատկանշական է, որ տարածաշրջանային հակամարտությունների կարգավորման գործում Ռուսաստանի առանձնահատուկ դերը, ինչպես նաև ռազմական ներկայությունը Անդրկովկասում, որոնք ժամանակին արժևորվում էին իբրև ռազմավարական ազդեցության բյուրեղացման հանգուցային չափում, տվյալ փուլում ձեռք են բերում ակնհայտ կիրառական-գործիքային «եղանակ»: Տվյալ խնդրի շուրջ պաշտոնական քաղաքական դիրքորոշումը հանգեցվում է նրան, որ «հակամարտող կողմերն իրենք պետք է փոխընդունելի համաձայնության գան, իսկ Ռուսաստանը պատրաստ է սատարել նրանց և դառնալ ձեռք բերված համաձայնությունների երաշխավորը»: Հակամարտությունների կարգավորման գործում ՌԴ «հատուկ» դերակատարությունն ավելի լայն տարածաշրջանային օրակարգում «ծուլվելու» մասին է վկայում, օրինակ, պատրաստակամությունը մոտ \$70 մլն ներդրում կատարել վրաց-աբխազական հակամարտության գոտում գտնվող խոշորագույն Ինգուրի ՀԷԿ-ում: Ակնկալվում է, որ այդ նախագծի իրագործումը տնտեսական խթան կհանդիսանա հակամարտության կարգավորման համար [30]:

Սցենարային վերլուծության այս գիծը շարունակելու դեպքում կարելի է ենթադրել, որ երկարաժամկետ հեռանկարում Ռուսաստանի հնարավոր նպատակն է անդրկովկասյան երկրներում սոցիալ-տնտեսական և քաղաքական գործընթացների որոշակի սինքրոնացումը նախկին մայր երկրում տեղի ունեցող նմանատիպ գործընթացների հետ: Բայց գործնականում նման մակարդակի հասնելը բավականին խնդրահարույց կլինի՝ հաշվի առնելով Արևմուտքի հակազդեցությունը ոչ միայն տնտեսության, այլև քաղաքական ասպարեզում [31]: Հռետորական հարց չէ՝ որքա՞ն երկար ժամանակ Ռուսաստանին կհաջողվի պահել տնտեսական զարգացման դինամիկ տեմպը և քաղաքական համախմբվածության ներկայիս մակարդակը, ինչը նախապայման է տարածաշրջանային կարգի ձևավորմանն ակտիվորեն մասնակցելու համար: Ոչ պակաս կարևոր է թվում տվյալ հարցադրումը այլ

տեսանկյունից՝ ինչպիսի՞ «շրջադարձ» կունենա գործող վարչակազմի «գեր»պրագմատիկ ուղեգիծը ապագայում՝ այս անհանգիստ տարածաշրջանում Ռուսաստանի ավանդական քաղաքական ազդեցության (ընկալման) պահպանման առումով, և ինչպիսի՞ հետևանքներ այն կունենա երկրի ներքաղաքական ոլորտի վրա: Ռուսաստանի ղեկավարող վերնախավում նախագահական արտաքին քաղաքականությունն այսօր չի վիճարկվում, սակայն գոյություն ունի հայտնի տարբերում՝ կապված առաջնահերթությունների դասակարգման հետ [32]:

Գաղտնիք չէ, որ ռազմավարական համագործակցության նախկին ընկալումը, որն Անդրկովկասի պարագայում կիրառելի էր միայն ռուս-հայկական հարաբերությունների բնութագրման համար, վերջին ժամանակաշրջանում ենթարկվում է նկատելի փոխակերպման: Նախկին քաղաքական նախընտրությունները, որոնք կանխորոշում էին ռազմավարական համագործակցության *modus*-ը և, ոչ վերջին հերթին, պայմանավորված էին անձնական-հոգեբանական բնույթի գործոններով, շատ առումներով նպաստեցին 1990-ական թթ. Ռուսաստանի որոշակի ազդեցության պահպանմանը տարածաշրջանում: Այնուամենայնիվ, հետեւյինյան շրջանում այս դասին պատկանող գործոնների արդիականությունը կտրուկ նվազեց: Անկասկած, «մակրոմակարդակում» Ռուսաստանի և Հայաստանի ռազմավարական համագործակցությունը հարատւ է և, ըստ ամենայնի, կզարգանա նաև հեռանկարում՝ առավել ևս նկատի ունենալով երկու երկրների հարաբերությունների ողջ համակարգի արագընթաց ինստիտուցիոնալացումը: Բայց տարածաշրջանային քաղաքականության «միկրոմակարդակում» Երևանը ստիպված կլինի հաշվի առնել Ռուսաստանի ավելի լայն «ձևաչափի» շահերը, ինչը չափազանց կարևոր է Անդրկովկասում ՌԴ ռազմավարական դաշնակից Թուրքիայի և Ադրբեջանի հետ հարաբերությունների չկարգավորված լինելու համատեքստում:

### Աղբյուրներ և գրականություն

1. Лукин А., Представления «демократических» групп о внешнем мире (1985-1991гг.), МЭМО, N8, 1995, с.104-113.
2. Ротарь И., «Андрею Козыреву пришлось нелегко в новом зарубежье», Независимая газета, 17.04.1992.
3. Линч Д., Реализм российской внешней политики, Pro et Contra, N6, Осень 2001 [эл.версия].
4. Военная мысль, N4-5 (Спецвыпуск), 1992.
5. Дипломатический вестник, N 1-2, с. 3-4. A Precarious Peace. Domestic Politics in

- the Making of Russian Foreign Policy, *International Security*, vol.22, N3, (Winter 1997/1998), p.5-35, *Menon R.*, In the Shadow of the Bear. Security in the Post-Soviet Central Asia, *International Security*, vol.20, N1, p.149-181.
6. Роль ООН и других международных организаций в урегулировании кризисных и конфликтных ситуаций, под ред. С.Рогова, Центр по национальной безопасности и международным отношениям, М., 1993, с.17.
7. *Fuller G., Arquilla J.*, The Intractable Problem of Regional Powers, *Orbis*, Fall 1996, vol.40, issue 4, p.609-621.
8. *Наумкин В.*, Россия и Закавказье, Кавказские региональные исследования, т.3, N1, 1997 [эл.версия].
9. Military Balance 2002-2003, IISS, London, 2003, p.94.
10. *Baev P.*, Russia's Policies in the Caucasus, RIIA, London, 1997, p.10.
11. *Шишков Ю.*, Россия и СНГ: неудавшийся брак по расчету, Pro et Contra, зима-весна 2001, с.92.
12. *Main S., Sherr J., Smith M.*, The Pattern of Russian Policy in the Caucasus and Central Asia, Conflict Studies Research Center, London, Occasional Brief, N101, p.1.
13. *Николайчук И.А.*, Военное сотрудничество стран СНГ как элемент их национальной безопасности, Полис: политические исследования, 1997, N5, с.159.
14. Итоги деятельности СНГ за 10 лет и задачи на перспективу: аналитический доклад, Дипломатический вестник, декабрь 2001.
15. Russia to keep base in Armenia, *Jane's Defence Weekly*, 22 March, 2000, p.11.
16. ИТАР-ТАСС 01.10.2002.
17. Armenia, Russia agree to create joint military contingent, *RFE/RL Newslines*, 17.04.2001.
18. Russia strengthens its military presence in Armenia, *PanArmenian News*, 13.12.2002.
19. *Гордиенко А.*, Грузино-российский «базовый» торг продолжается, *Независимая газета*, 10.06.2004.
20. *Агрян В.*, Договор об обычных вооруженных силах в Европе: позиции России и Запада в отношении фланговых ограничений, Южный Кавказ: проблемы региональной безопасности, том 1, Российско-Армянский (Славянский) Государственный Университет, Центр проблем региональной безопасности и интеграции Южного Кавказа, с. 36-54.
21. Верить и созидать, Красная звезда, 27.05.2004.
22. *Bremmer I., Bailes A.*, Sub-Regionalism in the Newly Independent States// *International Affairs*, vol.74, N1, Jan.1998, p.131-139.
23. Интерфакс, 30.04.2003.
24. Russia takes Armenian atom plant in debt swap, *Reuters*, 19.02.2003.
25. Armenal (Russia-Armenia) becomes wholly-owned by Russian Aluminum, *RIA Oreanda*, 20.01.2003.
26. У США вызывает опасения приход «Газпрома» в Грузию, *CNA* 29.05.2003, *Tsereteli M.*, Russian Energy Expansion in the Caucasus: Risks and Mitigation Strategy, Central Asia-Caucasus Analyst, 27.08.2003.
27. *Симоныан Ю.*, Грузия переходит на московское время, *Независимая газета*, 9.06.2004.

28. *Скорнякова А.*, РАО «ЕЭС» закрепляется на Кавказе, Независимая газета, 26.05.2004.
29. *Меркадыров Р.*, РАО «ЕЭС» готово покорить Азербайджан, Независимая газета, 20.10.2004.
30. РАО «ЕЭС России» намерено вложить инвестиции в крупнейшую в Грузии ИнгуриГЭС, Росбалт, 09 июня 2004.
31. *Сокор В.*, Дать отпор имперским амбициям Путина, *The Wall Street Journal*, 19.09.2003, *Rumer E.B.*, Collision Avoidance: U.S.-Russian Bilateral Relations and Former Soviet States, *Strategic Forum*, Institute for National Strategic Studies, NDU, N207, April 2004, *Мухин В.*, Военные вызовы каспийского региона, Независимое военное обозрение, 16.01.2004.
32. *Torbakov I.*, Russian Strategists Debate Kremlin Policies on CIS Integration, Jamestown Foundation, *Eurasia Daily Monitor*, vol. 1, issue 24, June 4, 2004.

Նվերեր, 2004թ.

## ПОЛИТИКА БЕЗОПАСНОСТИ РФ НА СОВРЕМЕННОМ ЭТАПЕ: НОВЫЕ ТЕНДЕНЦИИ В ЗАКАВКАЗСКОЙ СТРАТЕГИИ

*Арам Симонян*  
*Ваагн Агլян*

### Резюме

На протяжении новейшего этапа своего развития российская внешняя политика в отношении закавказского региона претерпела целый ряд трансформаций политического и структурного характера. В рамках данного краткого аналитического обзора авторы попытались в ретроспективном ключе представить ведущие тенденции региональной стратегии безопасности РФ при администрации В.В.Путина, в сравнительном контексте показать основные причины смещения акцентов в сфере обеспечения нацбезопасности на постсоветском юге, исследовать основные предпосылки принятия новых концептуальных и доктринальных установок в отношении перспектив и роли России на постсоветском пространстве.

Несмотря на все противоречия, присущие начальному периоду формирования внешней политики, к середине 1990-ых гг. основные параметры российской стратегии безопасности в Закавказье приняли более конкретные очертания. Россия сыграла ключевую роль в установлении качественно но-

вого регионального *status quo*, создав при этом достаточные предпосылки для сохранения за собой определяющего влияния на сложившийся в 1990-ые гг. военно-политический баланс сил в Закавказье. Тем не менее, к концу десятилетия стало очевидным, что Москве не удалось конвертировать функциональную роль гаранта стабильности в организационное доминирование на пространстве бывшего Советского Союза ввиду существенного ослабления ресурсной базы для активной внешнеполитической деятельности и усиления соперничества на региональной арене.

С приходом к власти В.В.Путина в 2000г. внешнеполитическая повестка РФ в отношении закавказского региона была существенно расширена. Это, несомненно, обусловлено процессами политической и экономической консолидации в России, предпринятыми решительными шагами по укреплению властной вертикали, благоприятной экономической конъюнктурой и ростом экономики РФ. Прежняя «односторонняя парадигма» российского присутствия в Закавказье, ориентированная на обеспечение военно-политического влияния была существенно сбалансирована и расширена экономической составляющей. В частности, за последние годы резко активизировалось присутствие российского капитала в регионе: под контроль крупнейших монополий РФ перешли ключевые объекты энергетической инфраструктуры, транспорта и промышленности в Армении и Грузии. Наряду с экономической и энергетической экспансией Москвой были предприняты конкретные шаги по институционализации межгосударственных и надгосударственных отношений в сфере безопасности на пространстве СНГ («распределение ответственности»). При этом действия по укреплению коллективной системы безопасности СНГ сопрягаются с принятой программой реорганизации системы российского зарубежного базирования, некоторым изменением конфигурации военного присутствия РФ в своем стратегическом окружении и инициированием создания субрегиональных блоков в границах Содружества.